ՏԵՂԵԿԱԳԻՐ ՍՍՌՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՖԻԼԻԱԼԻ
ИЗВЕСТИЯ АРМЯНСКОГО ФИЛИАЛА АКАДЕМИИ НАУК СССР
BULLETIN of the ARMENIAN BRANCH of the ACADEMY of SCIENCES of the USSR

№ 3—4 (17—18), 1942

ՍՍՌՄ Գիտ. Ակ. Հայկ. Ֆիլիալի ինստիտուտներում
По институтам Арм. фил. АН СССР
In the Institutes of the Arm. Branch Ac. Sc. USSR

ԱԿԱԴԵՄԻԿ Ն. ՅԱ. ՄԱՌԻ ԵՐԿԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ՄԻՀԱՏՈՐՅԱԿ

Գրականության և լեզվի ինստիտուտը ձեռնարկել է նորագույն լեզվագիտության ու հայագիտության հիմնադիր ակադեմիկ Ն. Յա. Մառի երկերի հայերեն միհատորյակ հրատարակելու գործին։

Հատորն ընդգրկում է հայագիտության խնդիրները. այստեղ ներկայացված աշխատություններից են՝ «Հայկական մշակույթը, նրա արմատները և նախագաղտական կապերը ըստ լեզվագիտության» (սա Փարիզի հայ ուսանողության համար 1923 թվին կարդացած վերին աստիճանի հետաքրքրական դասախոսությունն է, որի բնագիրը հայերեն է), «Հաբեթական տարրերը Հայաստանի լեզուներում» սերիան, «Հայերի երկու ցեղանունների աստղաբաշխական և էթնիկական նշանակությունը», «Հաբեթական երկու ածանց հայերենում» և մի շարք այլ լեզվաբանական-ստուգաբանական հոդվածներ։

Հատորի մեջ ներկայացված է ակադեմիկ Մառի ընդհանուր ուսմունքը հետևյալ աշխատություններով՝ «Լեզվի ծագման մասին», «Լեզու և մտածողություն», «Պատմական պրոցեսի հարցի առթիվ ըստ հաբեթական տեսության լուսաբանության», «Հաբեթականներ» և այլն։ Այս հոդվածներն արտահայտում են Մառի ստեղծած՝ լեզվի նոր ուսմունքի զարգացումը, նրա ընդհանուր և մասնավոր մեթոդոլոգիան և տալիս են բուրժուական լեզվաբանության իդեալիստական, հակագիտական ու հակապատմական մեթոդոլոգիայի մատերիալիստական քննադատությունը։

Հատորում ներկայացված են ակադ. Մառի մի շարք այլ աշխատություններ ևս, որոնք լուսաբանում են հայ ժողովրդի կուլտուր-պատմական կապերը հարևան և հեռավոր ժողովուրդների հետ, ինչպես օրինակ, «Թրակա-հայկական Սաբաձիոս-Աստված և սվանական որսի աստվածությունը», «Հայ-վրացական բանասիրության խնդիրները» այլն։

Ակադ. Ն. Մառի հատընտիր երկերի այս հատորն ունենալու է ընդարձակ ներածական հոդված և գիտական ապարատ (առարկայական, անվանական, տերմինների և ստուգաբանական ցանկեր ու ծանոթագրություններ)։ Հատորը խմբագրում են Արարատ Ղազարյանը, Գ. Սեվակը, Լ. Քալանթարը և Ս. Ղազարյանը։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ